ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 9-Ա

<< 09 >> հունիսի 2017թվական գյուղ Լուսաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ,ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00324 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Ժորա Հովհաննեսի Կարապետյանի 2017թվականի հունիսի 5-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսաղբյուրի համայնքի ավագանին

որոշում է

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսաղբյուրի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին,որով նախատեսվում է համայնքի վարչական սահմանում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-049-0226-կադաստրային ծածկագրով 0.00324 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողամասը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն,այդ հողամասում ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և հողամասի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու նպատակով:
2. Համայնքի ղեկավար՝ Մելս Մանուկյանին՝
Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|---|
| ԱՐԱ ԲԱԴԱԼՅԱՆ՝ | կողմ | | | |
| ՊԱՐԳԵՎ ԲԱԴԱԼՅԱՆ՝ | կողմ | | | |
| ԱՐՄԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ՝ | կողմ | | | |
| ՀՐԱՉ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ | կողմ | | | |
| ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | կողմ | | | |

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵԼՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

<< 09 >>հունիսի 2017թվական

գյուղ Լուսաղբյուր